

դահեկան կը պահանջէր. ուստի Մովսէս աշխատի ասկէ նուազ կամ նոյնչափ վճարել, բայց ոչ աւելի (Աղանեանց, անդ, էջ ԾԾԹ): Այս բանակցութիւնն ի դերեւ ելած է սակայն: Սարգիս նոյն տարին իւր տպարանն ամէն կազմածով ծախեց Կեսարացի գիտուն տիրացու Գէորգին, եւ զինն ալ գանձած էր, երբ 1766 Մայիսի 11ի մեծ երկրաշարժին փլաւ նաեւ Վէղիր խան, ուր էր (Սարգսի) Գէորգայ տպարանը եւ Գէորգ ալ տպարանին մէջ փլատակներու տակ մեռաւ (վերն՝ երգ Թ): Սոյն դէպքը կը յիշէ նաեւ Սարգիս Դպիր Յօհաննիսեան՝ 1760—90ին միջոցին գրած մէկ ձեռագրին մէջ. «Յամի Տեառն 1766 ... յամսեանն Մայիս 11, յաւուր եշ. 19 երորդում օրն յինանց ի յառաւօտեան պահու ժամ անցեալ մէկ ջէյրէք տասն, եղև շարժ իմն ի Կ.Պոլիս, սաստիկ որոտմամբ եւ յանկարծազեկ երեւմամբ՝ ահաբեկ յոյժ թընդմամբ տեւելով հաղիւ թէ ըսպէ երկու... զի քաղաքն լցոյց քարակուտիւք, բլուցանելով զմեծամեծ մղկիթսն ... զորոյ ի բլատակսն բազումք մեռան ի քրիստոնէից, որոց մինն մանաւանդ էր տիրացու Գէորքն կեսարեան իմաստասէր յոյժ եւ դպրութեանց ոմանց ազգաց իսկ տեղեակ...» Կ'երեւայ թէ Գէորգ նոյն իսկ 1766ին բացած է տպարանը, վասն զի Վէղիր խանի Գէորգայ տպարանէն եւ ոչ իսկ հատ մը տպագրութիւն ծանօթ է:

Իսկ Սարգսի տպագրական գործունէութենէ ունինք ուրիշ փոքրիկ գիրք մ'ալ, տպուած 1769ին ի Կ.Պոլիս: